

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1064 հրամանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգի 5-րդ և 8-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության նախարարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների 2004 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի բաղկացուցիչ մաս համարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 2004 թվականին իրականացվելիք միջոցառումները, ինչպես նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող՝ 2004 թվականին իրականացվելիք միջոցառումները:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում՝ սույն որոշման N 1

հավելվածում ներառված միջոցառումների իրականացման ընթացքի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի գործունեության ծրագրի կատարման մասին:

4. Հայաստանի Հանրապետության նախարարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում՝ սույն որոշման N 2 հավելվածում ներառված գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2004 թ. հունվարի
Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈՐԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
1	2	3
1.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար	<p>հողի հարկի և գույքահարկի գանձման լիազորությունները համայնքներին փոխանցելու (պատվիրակելու) գործընթացի կազմակերպում և դրանից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացում</p> <p>Երևանի ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով քաղաքի կառավարման նոր մոդելի մշակման նախաձեռնում (նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Երևանի մասին» ՀՀ օրենքի նախագիծ)</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն իրականացնում է համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի փոխանցումը համայնքների սեփականությանը, համայնքներում քարտեզագրման և սեփականության իրավունքի առաջին գրանցման վկայականների տրամադրման աշխատանքները: Արդյունքում էականորեն մեծանում է համայնքների բյուջեների մուտքերի հաշվարկային ֆիզիկական ծավալը և գանձման իրավասության փոխանցմանը՝ նաև համայնքային բյուջեների սեփական եկամուտների փաստացի կատարման իրատեսական հնարավորությունը: Քարտեզագրման արդյունքում և ստացված նյութերի հիման վրա օրենքով սահմանված կարգով կնկարագրվեն համայնքների վարչական սահմանները, լուծում կտրվի առկա մի շարք վարչական սահմանային անորոշություններին, որը կնպաստի նաև համայնքների բյուջեների իրատեսական ձևավորմանը և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:</p> <p>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների աշխատանքների կազմակերպման լիազորության փոխանցում այն տեղական համայնքներին, որոնցում նրանք այսօր գործում են:</p> <p>«Մունիցիպալ ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման կազմակերպում՝ իրավասու կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ</p>
2.	ՀՀ առողջապահության նախարարություն	<p>ՀՀ առողջապահության ոլորտի կանոնակարգում՝ «Առողջապահության մասին» ՀՀ հիմնական օրենքի նախագծի մշակում</p> <p>ՀՀ առողջապահության ոլորտում տեղեկատվական համակարգի ներդրում ըստ փորձարարական ծրագրի</p>
3.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	<p>կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում</p> <p>ապրանքների և ծառայությունների որակի ու նրցակցության բարձրացման, միջազգային նորմերի հետ ներդաշնակեցման նպատակով ստանդարտացման, համապատասխանության հավաստման և չափազիտության բնագավառների մոտեցում միջազգային ստանդարտներին</p> <p>փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման և ամրապնդման նպատակով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի 3 նոր մարզային մասնաճյուղի ստեղծում</p> <p>IT համահայկական համաժողովի անցկացում</p>
4.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	<p>ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի մշակում</p> <p>Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման համակարգի ստեղծում</p>

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
5.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի հզորացում եվրոպական ինտեգրացման գործընթացում Հայաստանի Հանրապետության հետագա ներգրավում
6.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Նախադարձական համակարգի բարեփոխում միջին մասնագիտական կրթության և արհեստագործական դպրոցների համակարգի վերափոխում գեղագիտական դաստիարակության և կրթության համակարգի վերափոխում
7.	ՀՀ արդարադատության նախարարություն	պետական գրանցման ավտոմատացման նոր համակարգի փորձարկում և ներդրում պետական ռեգիստրի Web էջի ստեղծում ՀՀ իրավական ակտերի համակարգված ժողովածուի էլեկտրոնային տարբերակի ստեղծում
8.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրում ու կիրառում նախարարության համակարգի մոնիտորինգի միասնական համակարգի ստեղծում, ծնավորում և իրականացում
9.	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ Ազգային ժողովի կողմից մշակույթի ոլորտում առնվազն 4 իրավական ակտի ընդունում (նախատեսվում է մշակել «Կինոարվեստին պետական աջակցության մասին», «ՀՀ թանգարանային հավաքածուի և թանգարանների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքների նախագծեր) մշակութային արժեքների արտահանման և ներմուծման իրավական կարգավորում միջազգային իրավունքի նորմերին համապատասխան (ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենքի և ՀՀ կառավարության կողմից մի քանի որոշումների ընդունում) նորոգված թանգարաններում նոր ցուցադրությունների կազմակերպում պատմամշակութային 3 կարևորագույն հուշարձանի (Որոտնավանք, «Բարձրյալ խաչ» վկայարան, Աշտարակի կամուրջ) վերանորոգում գեղագիտական կրթության հայեցակարգի մշակում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ
10.	ՀՀ բնապահպանության նախարարություն	ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մշակում («Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծ) ՀՀ անտառային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում
11.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության կարգավորմանը և բարեփոխմանը վերաբերող օրենսդրական դաշտի ստեղծում ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստառադիոընկերության (առնվազն մեկ հեռուստաալիք և մեկ ռադիոալիք) ծրագրերի ընդունման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում ՀՀ պետական մարմինների գերատեսչական հեռահաղորդակցության ցանցի ստեղծման առաջին փուլի իրականացում (PABX կայանների միջոցով)
12.	ՀՀ էներգետիկայի նախարարություն	հանրապետությունում գազամատակարարման համակարգի արդիականացում և բնական գազի ներկրման ուղիների բազմազանացում՝ գազի ստորգետնյա պահեստարանի արդիականացում Իրան-Հայաստան գազամուղի առաջին փուլի ֆինանսավորման, կառուցման մեկնարկման համար անհրաժեշտ աշխատանքների կազմակերպում Արաքս գետի հիդրոպոտենցիալի օգտագործում՝ Մեղրու ՀԷԿ-ի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման ավարտում և կառուցման ֆինանսավորման սխեմայի կազմակերպում սեփական վերականգնվող էներգառեսուրսների առաջընթաց յուրացման խթանում՝ փոքր ՀԷԿ-երի արդիականացման և կառուցման նպատակով գերմանական KFW բանկի կողմից վերականգնվող հիմնադրամի ստեղծում և գործընթացի մեկնարկում ՇՆՈՂ և Լոռի բերդ ՀԷԿ-երի կառուցման շուրջ վարվող բանակցությունների ավարտում և աշխատանքների մեկնարկում

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
13.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	<p>աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացում՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ընդունում և դրանց իրականացում</p> <p>լիզինգին վերաբերող իրավական դաշտի կարգավորում (լիզինգի գործընթացի օրենսդրական հստակ կարգավորման բացակայության և դրա զարգացման համար նախադրյալների ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված)</p> <p>Արժույթի միջազգային հիմնադրամի, ինչպես նաև Համաշխարհային բանկի հետ նոր ծրագրերի շուրջ բանակցությունների վարում և այդ ոլորտում առաջընթացի ապահովում</p> <p>«Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո ապահովագրական ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի ձևավորում ապահովագրական ոլորտի կարգավորման ու վերահսկողություն իրականացնող մարմնի հզորացմամբ</p> <p>հանրային ծառայություններ մատուցող ընկերություններում (այդ թվում՝ էներգահամակարգի, խմելու և ոռոգման ջրերի համակարգի ընկերություններ, Երևանի մետրոպոլիտեն) կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում և համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարություն ներկայացնելը</p> <p>բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների համար (համատիրություններ) տեխնիկական և ֆինանսական աջակցության մեխանիզմների մշակում և համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարություն ներկայացնելը</p> <p>պետության և համայնքների կարիքների համար իրականացվող գնումների բնագավառում նախատեսվում է գնումների մասին ՀՀ օրենսդրության կատարելագործում, էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ուղղությամբ միջոցառումների և վերապատրաստման ծրագրերի իրականացում</p> <p>ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և գանձապետական համակարգերում նախատեսվում է այդ համակարգերի երկրորդ սերնդի բարեփոխումների փորձնական ծրագրի և վերապատրաստման ծրագրերի իրականացում</p> <p>ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի բնագավառում նախատեսվում է՝</p> <p>ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարության հստակեցում</p> <p>հաստատված ռազմավարական ծրագրի հիման վրա ներքին աուդիտի իրավական դաշտի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմիններին վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման գործընթացի կատարելագործում</p> <p>ներքին աուդիտի ձեռնարկի մշակում</p> <p>վերապատրաստման ծրագրերի իրականացում</p> <p>պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական և տնտեսական գործունեության կարգավորման բնագավառում նախատեսվում է այդ կազմակերպությունների ֆինանսական ու տնտեսական գործունեության, այդ թվում՝ հաշվետվությունների և մոնիտորինգի հետ կապված հարաբերությունների կանոնակարգում</p> <p>հարկային համակարգի միասնականության միասնական սկզբունքների ապահովման նպատակով հարկային օրենսգրքի նախագծի մշակում</p>

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
14.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	<p>ՀՀ Տավուշի և Վայոց ձորի մարզերում 6.5 հազ. հեկտար հողատարածքի համար ինքնահոս ջրամատակարարման աշխատանքների իրականացում</p> <p>գյուղատնտեսական կենդանիների համաճարակների կանխարգելման համակարգի կատարելագործում, սննդամթերքի անվտանգության հսկողության մեխանիզմների հստակեցում, սահմանային հսկիչ կետերի գործունեության կանոնակարգում, տեխնիկական վերազինում</p> <p>բույսերի պաշտպանության միջոցների ներկրման և վաճառքի կանոնակարգում, գործառնությունների աստիճանական ապակենտրոնացում</p> <p>սերմնարտադրության համակարգի օրենսդրական հիմքերի հստակեցում, սերմերի որակի ստուգման գործուն մեխանիզմների ներդրում</p>
15.	Գ Ա Ղ Տ Ն Ի	
16.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ազգային անվտանգության ծառայության գերակա հարցերն անմիջականորեն առնչվում են օպերատիվ-հետախուզական գործունեության հետ, որոնք հրապարակման ենթակա չեն:</p> <p>ազգային անվտանգության ծառայության համակարգի օպերատիվ-ծառայողական գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերն արդի ժամանակաշրջանի խնդիրներին համապատասխանեցնելու և ԱՊՀ անդամ-պետությունների «Ղեկտա» տեղեկատվական համակարգում ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմինները ներգրավելու ուղղությամբ տարվող աշխատանքների ավարտում</p> <p>ՀՀ ոստիկանության մարմինների հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունում պայթուցիկ նյութերի հաշվառման, պահման և օգտագործման գործընթացների ստուգում և այդ արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, համապատասխան տեղեկատվություն ՀՀ կառավարություն ներկայացնելը</p> <p>Լոռու և Տավուշի տարածաշրջաններում սահմանապահ 2 ուղեկալի շինարարության ավարտում</p> <p>Ժամանակակից ծրագրային և հաշվողական տեխնիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմինների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծման ուղղությամբ միջոցների ձեռնարկում</p>
17.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	<p>ոստիկանության ծառայողների աշխատավարձերի բարձրացում (Այլ նպատակով 2004 թ. հունվարի 3-րդ տասնօրյակում նախատեսվում է ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «ՀՀ ոստիկանության ծառայողների ֆինանսական ապահովման և դրամական բավարարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի ընդունման դեպքում ՀՀ պետական բյուջեով ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը լրացուցիչ հատկացումներ տրամադրելու անհրաժեշտություն կառաջանա:)</p> <p>Երևանի կենտրոնում ավտոմատ կառավարման նոր համակարգի ներդրում (Այն կնպաստի փողոցներում, հրապարակներում, պուրակներում ու հասարակական այլ վայրերում հասարակական կարգի ու հասարակական անվտանգության պատշաճ ապահովմանը, ճանապարհային երթևեկության մասնակիցների, ինչպես նաև կազմակերպվող մշակութային, մարզական և զանգվածային այլ միջոցառումների մասնակիցների կարգապահության բարձրացմանը: Ավտոմատ կառավարման համակարգի ներդրմամբ խստիվ կպահպանվի փողոցներում, խաչմերուկներում և հասարակական այլ վայրերում իրավախախտում թույլ տվող անձանց նկատմամբ իրավական արձագանքման պրակտիկան, էականորեն կխթանվի պատասխանատվության անխուսափելիության մթնոլորտի ստեղծման գործընթացը: Համակարգի ներդրումը կնվազեցնի «քաղաքացի-ոստիկան» անմիջական փոխհարաբերությունների ոլորտը, ինչն իր հերթին կնպաստի տվյալ բնագավառում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը (մշված միջոցառման իրականացման համար կպահանջվի 600 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:)</p>

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
18.	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	<p>հարկային ապառքների կրճատում՝ դրանց կառավարման որակի բարձրացման հաշվին: Ընթացիկ ապառքների հնարավորինս բացառում, չկատարված հարկային պարտավորությունների գանձելիության բարձրացման միջոցառումների իրականացում</p> <p>հարկային եկամուտների աճին զուգընթաց հարկային գերավճարների նվազեցմանն ուղղված վարչարարության իրականացում</p> <p>հարկային հսկողության ռազմավարության օրենսդրական հիմքերի ստեղծում</p> <p>հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման՝ օրենքով կարգավորում և դրանց ներդրման ու շահագործման կանոնների նկատմամբ հսկողության ուժեղացում</p>
19.	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	<p>Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող փախստականներին բնակարաններով ապահովելու խնդրի լուծում (մշակվելու է ծրագիր, որի համաձայն 2.5-3 տարվա ընթացքում բնակարաններով կապահովվեն շուրջ 4000 փախստականի ընտանիք)</p> <p>ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքային գործունեության կանոնակարգում՝ աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովում (մշակվելու է համապատասխան օրենքի նախագիծ)</p> <p>ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ տարածքից ելքի և մուտքի կանոնների սահմանում (մշակվելու է համապատասխան օրենքի նախագիծ)</p> <p>բնակչության տեղաշարժերի մասին ճշգրիտ տեղեկատվության ստացում (մշակվելու է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ)</p>
20.	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	<p>ՀՀ օդային տարածքում օդանավերի ուղղաձիգ տարանջատման կրճատված միմիսումների ներդրում «Եվրոկոնտրոլ» կազմակերպությանն անդամակցում</p>
21.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	<p>փոքր օբյեկտների մասնավորեցման գործընթացի ավարտում (նախատեսվում է մինչև 2004 թ. ավարտը չմասնավորեցված «փոքր» օբյեկտներն անհատույց հանձնել համայնքներին)</p> <p>պետական գույքի մասնավորեցման պայմանագրերում պարտավորությունների մորազման և դրանց կատարման վերահսկման գործընթացի կանոնակարգում (այդ նպատակով առաջիկայում ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ)</p>
22.	ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն	<p>Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծում</p> <p>կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու իրազեկման համակարգի հիմնում</p>
23.	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե	<p>Երևանի սպառողների շուրջ 80 տոկոսին շուրջօրյա ջրամատակարարման ապահովում (2005 թ. այն հասցնել 95 տոկոսի, նախատեսվում է մշակել համապատասխան ծրագիր)</p> <p>Ճակոցային սոցիալական զարգացման հիմնադրամի՝ 1.9 մլն ԱՄՆ-ի դոլարի դրամաշնորհի շրջանակներում համատիրությունների ձևավորման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի վերանորոգում, ինչպես նաև աղքատության ընտանեկան նպաստ ստացող ջրօգտագործողների ջրաչափերի տեղադրում</p> <p>14 ջրօգտագործող ընկերությունների հիմնադրում (ներկայումս 18-ն են)</p>
24.	ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	<p>մաքսային մարմիններում մալուխային և արբանյակային կապի ներդրման արդյունքում ստացվելիք տեխնիկական նոր հնարավորություններին համապատասխան գործող օրենսդրական դաշտի լրամշակում</p> <p>մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության առանձին մասնակիցների համար էլեկտրոնային կապուղիներով հայտարարագիր ներկայացնելու հարցի կարգավորում</p> <p>մաքսային հսկողության ու ձևակերպումների շղթայի արմատական բարելավում՝ մաքսային ձևակերպումներ իրականացնող մաքսային մարմիններում մաքսային զննման և հաշվառման վայրեր (համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ) ստեղծելու միջոցով (2004-2006թթ.)</p>

NN ը/կ	Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները
25.	ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե	2004 թ. Աթենքում կայանալիք (Յունաստան) 28-րդ Օլիմպիական խաղերին ՀՀ մարզական պատվիրակության նախա-պատրաստության և մասնակցության ծրագրի իրականացում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2002-2004 թթ. պետական ծրագրի իրականացում
26.	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	պետական սեփականություն հանդիսացող հողերի անհատույց փոխանցում համայնքներին, հողային ֆոնդի սկզբնական հաշվառման ավարտում՝ հողային օրենսգրքի դասակարգման նոր սկզբունքների համաձայն գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, հասարակական ու արտադրական շենքերի և շինությունների կադաստրային գնահատում, հողի և գույքի նոր բազայի ձևավորում WGS-84 համաշխարհային կոորդինատային համակարգում գեոդեզիական նոր ցանցի հիմնում ֆոտոզմետրիական աշխատանքներով, օդալուսանկարահանման և արբանյակային հանութագրման լուսանկարների վերծանմանը պետական մասշտաբային շարքի թվային քարտեզների ստեղծման գործընթացի սկիզբ քաղաքացիների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի ներդրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ պատիժների իրականացման ոլորտում իրականացվող բարեփոխումների համար օրենսդրական հիմքի ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն	2004 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
2. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քրեակատարողական օրենսգրքի որոշ անցումային դրույթների կանոնակարգում	ՀՀ արդարադատության նախարարություն	2004 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի N 277 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի N 277 որոշման համապատասխանեցումը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքին ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.6-րդ կետի երրորդ պարբերության պահանջների կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2004 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	
4. «2004 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ առողջապահության ոլորտի բուժիաստատություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպում և կանոնակարգում, բուժօգնության մատչելիության ապահովման և պետական պատվեր իրականացնողների նկատմամբ վերահսկողության նոր ու արդյունավետ մեխանիզմների կիրառում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.1-ին կետի տասներորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	2004 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
5. «Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պետական գույքի մասնավորեցման պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման նկատմամբ վերահսկման համապատասխան մեխանիզմների սահմանում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.6-րդ կետի առաջին պարբերության պահանջների կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
6. Գործադիր իշխանության որոշ մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համակարգման արդյունավետության բարձրացում, բանկային համակարգի ֆինանսական հոսքերի կառավարման և իրացվելիության բարելավում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	2004 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	
7. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար Ս և ՌՏ ներհանրապետական գնումների 2004 թ. պետական պատվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ս և ՌՏ ներհանրապետական գնումների 2004 թ. պետական պատվերի ձևավորում	ՀՀ պաշտպանության նախարարություն	2004 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
8. «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գիտական և գիտամանկավարժական երիտասարդ կադրերի պատրաստում և հետբուհական մասնագիտական կրթության իրավական դաշտի հստակեցում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	
9. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	օրենքի կատարելագործում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2004 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	
10. «Թափոնների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ-ում գոյացող թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասագերծման և թաղման հետ կապված գործունեության իրավական, կազմակերպչական և տնտեսական հիմքերի կանոնակարգում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի տասներեքերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
11. «Ոստիկանության ծառայողների ֆինանսական ապահովման և դրամական բավարարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարում և ՀՀ Նախագահի 2002 թ. օգոստոսի 5-ի N 1158-Ա կարգադրության 2-րդ կետի «ե» ենթակետի պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
12. «Ջրամատակարարներին և ջրօգտագործողներին ֆինանսական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ջրային տնտեսությունների ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության բարելավում և ֆինանսական ճեղքվածքի փակման, ջրօգտագործողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու արդյունավետ մեխանիզմների ներդրում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
13. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 3-ի N 350 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հատկացվող միջոցների նպատակաուղղում ծայրաստիճան աղքատ ընտանիքներին՝ հատկապես բազմազավակ ընտանիքներին ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.2-րդ կետի տասնմեկերորդ պարբերության կատարման ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
14. «Ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ-ում ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման գործընթացի կանոնակարգում բնակչության լայն խավերի համար ավանդների երաշխավորման համակարգի գործունեության հիմնական սկզբունքների մատչելիության ապահովում	ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
15. «Հայաստանի Հանրապետության առաջնությունների մասնակիցների սննդի և գիշերավարձի, մրցավարների և սպասարկող անձնակազմի, հաղթողների պարգևատրման չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	միջազգային մրցումներում ազգային հավաքական թիմերի հաջող մասնակցության ապահովում, մրցավարների և սպասարկող անձնակազմի սոցիալական վիճակի բարելավում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.5-րդ կետի պահանջի կատարում	ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
16. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 29-ի N 473 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրով նախատեսված միջոցների արդյունավետ օգտագործում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.2-րդ կետի տասնմիկերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
17. «Կենդանական ծագման հունքի և մթերքի (մսի և սպանդի մյուս մթերքի) անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կենդանական ծագման հունքի և մթերքի արտադրության և իրացման բնագավառում պետական անասնաբուժասանիտարական վերահսկողության կանոնակարգում և ուժեղացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
18. «Փաստաբանության և փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	փաստաբանության ինստիտուտի համապատասխանեցումն ընդունված միջազգային չափանիշներին	ՀՀ արդարադատության նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
19. «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջի կատարում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.9.1-ին կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
20. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 10-ի N 742 որոշման մեջ փոփոխության կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	բույսերի պաշտպանության քիմիական միջոցների փորձաքննության անցկացման գործընթացի կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
21. «Հույժ շտապ և ընդհանուր նշանակության հիդրո-օդերևութաբանական տեղեկատվության ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հույժ շտապ և ընդհանուր նշանակության հիդրո-օդերևութաբանական տեղեկատվության ցանկի սահմանում՝ համաձայն «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի տասնվեցերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2004 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
22. «Բուսասանիտարական փորձաքննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	բուսական ծագման մթերքի արտադրության և իրացման բնագավառում վերահսկողության կանոնակարգում և ուժեղացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
23. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ոստիկանության կառավարման արդյունավետության բարձրացում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2004 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
24. «Մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի 2004/2005 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գիտական և գիտամանկավարժական երիտասարդ կադրերի պատրաստում և բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության շարունակականության ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
25. «Գեղարվեստական կրթության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գեղարվեստական կրթության խնդիրների սահմանում և նրա զարգացման համար պայմանների ստեղծում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.4-րդ կետի առաջին և երկրորդ պարբերությունների պահանջների կատարման ապահովում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
26. «Սերմնաբուծության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	սերմնաբուծության բնագավառում օրենսդրական փոփոխությունների կարգավորում սերմնաբուծության զարգացման համար գործուն մեխանիզմների ձևավորում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
27. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների 2004/2005 ուսումնական տարվա ընդունելության անվճար ուսուցման տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ՀՀ պետական բուհերի ընդունելությունը կազմակերպելու նպատակով և մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու՝ ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
28. «Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման 2004/2005 ուսումնական տարվա ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	մրցութային հիմունքներով անվճար միջին և նախնական մասնագիտական կրթություն ստանալու՝ ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
29. «Պարտադիր սոցիալական ապահովագրության ծրագրերի իրականացմանը վերաբերող ֆինանսական և վիճակագրական տվյալները կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման ապահովում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.2-րդ կետի վեցերորդ, յոթերորդ և տասներորդ պարբերությունների պահանջների կատարման ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2004 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
30. «Երիտասարդության պետական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.6-րդ կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2004 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
31. «Բնապահպանական պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	բնապահպանական օրենսդրության պահանջների կիրարկման ապահովում ՀՀ կառավարության 2003 թ. օգոստոսի 28-ի N 34 նիստի արձանագրության 2-րդ կետի կատարման ապահովում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի տասնհինգերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
32. «Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կենդանական աշխարհի օբյեկտների՝ սոցիալական նպատակներով օգտագործման կանոնակարգում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 10-ի N 884-Ն որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի պահանջները ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի տասնհինգերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
33. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	օրենքի կիրառման ընթացքում առաջացած առանձին խնդիրների իրավական կարգավորում	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
34. «Ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող (ուղեկցվող) ապրանքների մաքսային ձևակերպումների պարզեցված կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության ներկայացնելը	մաքսային մեխանիզմների պարզեցում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.5-րդ կետի պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
35. «Սելեկցիոն նվաճման լիցենզային պայմանագրերի գրանցման և հարկադրական լիցենզիա տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջների կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
36. «Հատուկ թեմատիկայով գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների 2004 թվականի պետական պատվերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2004 թ. պետական պատվերով կատարվող հատուկ թեմատիկայով աշխատանքների կատարում	ՀՀ պաշտպանության նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
37. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
38. Գույքահարկի հաշվարկման գործառույթների փոխանցման համայնքային ծրագիրը սահմանող ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2003 թ. փետրվարի 13-ի N 192-Ն որոշմամբ սահմանված ժամկետում (2004-2005 թթ.) ՀՀ գյուղական համայնքներին գույքահարկի հաշվարկման գործառույթների փոխանցման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
39. Ծառայությունների և աշխատանքների գրանցումը կանոնակարգելու վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկ վճարողի կողմից մատուցվող ծառայությունների և աշխատանքների գրանցման համակարգի ներդրում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.5-րդ կետի չորրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
40. «Հարկային հսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային վարչարարության կատարելագործում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.5-րդ կետի հինգերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
41. «Գազամատակարարման համակարգի տեխնիկական կանոնակարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գազամատակարարման ոլորտի տեխնիկական կանոնակարգերի հաստատման գործընթացի համակարգում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.9.1-ին կետի երրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
42. «Աղբբեռների շանրապետությունից բռնագաղթած և բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող փախստականների բնակարանային ապահովման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Աղբբեռներից բռնագաղթած՝ խիստ կարիքավոր փախստականների ընտանիքներին մշտական օթևանով ապահովում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.7-րդ կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
43. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մինչև այժմ իրականացվող սոցիալական ապահովության քաղաքականության ժառանգականության ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
44. Բույսերի պաշտպանության միջոցների և անասնաբուժական կենսապատվաստուկների ու շիճուկների արտադրության և իրացման գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	բույսերի պաշտպանության միջոցների և անասնաբուժական կենսապատվաստուկների ու շիճուկների արտադրության և իրացման հարցերի կանոնակարգում, ինչպես նաև տոհմային անասնաբուժության հետ կապված խնդիրների հստակեցում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ ենթակետի երկրորդ պարբերության պահանջների կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2004 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
45. «Անասնաբուժական կենսապատվաստուկների և շիճուկների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	անասնաբուժական կենսապատվաստուկների և շիճուկների գրանցման գործընթացի կանոնակարգում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
46. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ վարչատարածքային միավորների սահմանների նկարագրման և հաստատման աշխատանքների կանոնակարգում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
47. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	շարժական գույքի կադաստրի և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական համակարգի ստեղծում և ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
48. «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման 2003 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կատարում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.6-րդ կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
49. «Դպրոցականների 2004 թվականի ամառային հանգիստը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
50. «Մարզական հասարակական կազմակերպությունների ֆինանսական աջակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մարզական հասարակական կազմակերպությունների դերի և նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.5-րդ կետի պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե	2004 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
51. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 9-ի N 172 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մաքսային մեխանիզմների պարզեցում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.5-րդ կետի պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	2004 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
52. ՀՀ ճանապարհային ցանցի զարգացման նպատակով իրականացված աշխատանքների մասին ՀՀ կառավարություն հաշվետվություն ներկայացնելը	ՀՀ ճանապարհային ցանցի զարգացման նպատակով իրականացված աշխատանքների մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2004 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
53. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ագրարային կանոնների խախտման դեպքում տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության մեծացման և այլ կանոնների կատարման նկատմամբ հսկողության ուժեղացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
54. «Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման ապակենտրոնացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հատուկ կրթական հաստատությունների կառավարման համակարգի բարեփոխում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
55. «Համատիրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տեղական ինքնակառավարման մարմինների և բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի փոխհարաբերությունների հստակեցում	Երևանի քաղաքապետ ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2004 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
56. «Ճապոնիայի կառավարության տրամադրած վարկով Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության մոր շոգեզազային էներգաբլոկի կառուցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների արդիականացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.9.1-ին կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
57. «Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	ՀՀ տարածքում հանքավայրերի և օգտակար հանածոների մարված ու մնացորդային պաշարների հաշվառում, ինչպես նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի կիրարկման ապահովում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի տասնհինգերորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
58. « Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	Չիկագոյի կոնվենցիայի N 17 «Անվտանգություն» հավելվածի և «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
59. «Ղատապարտված, հանցագործություն կատարած, ինչպես նաև հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվության հաշվառումների, օպերատիվ-տեղեկատվական քարտադրամների վարման, տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	ղատապարտված, հանցագործություն կատարած, ինչպես նաև հետախուզման մեջ գտնվող անձանց մասին տեղեկատվության հաշվառումների, օպերատիվ-տեղեկատվական քարտադրամների վարում՝ ելնելով տեղեկատվության տրամադրման կանոնակարգման անհրաժեշտությունից	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
60. «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
61. Կրթության որակի և համապատասխանության ծրագրի վերաբերյալ առաջարկությունը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	հանրակրթության որակի բարձրացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
62. «Թատրոններին և թատերադաստիստներին պետական աջակցություն ցուցաբերելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	թատերադաստի ոլորտի իրավական կարգավորում, թատերադաստի նպաստավոր պայմանների ստեղծում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.3.4-րդ կետի առաջին և երկրորդ պարբերությունների պահանջների կատարման ապահովում	ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
63. «Բույսերի պաշտպանության քիմիական միջոցների փորձաքննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	հանրապետությունում օգտագործվող բույսերի պաշտպանության քիմիական միջոցների որակի նկատմամբ վերահսկողության կանոնակարգում և ուժեղացում ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.8.2-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
64. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն և ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հետ համապատասխանեցում, առկա հակասությունների վերացում	Երևանի քաղաքապետ	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
65. «Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Էլեկտրոնային թվային ստորագրության իրավական հիմքերի սահմանում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
